

Բ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Մ Ի Հ Ի Ն Ա Ի Ո Ի Ր Ց Չ Ա Փ

Շատ անգամ գրականութեան մէջ տեղի են ունենում այնպիսի վերակենդանացումներ, որոնք մեզ թւում են նորութիւն և վերագրում ենք այս կամ այն հեղինակին: Այս դէպքում մեղաւոր է ոչ ընթերցողը և ոչ հեղինակը, քանի որ երկուսն էլ անգիտակցաբար են սխալւում. և սակայն երբ թափ ենք տալիս անցեալի փոշիները, այդ նորութիւն կարծուածները դառնում են յանկարծ հնութիւն: Այսպիսի մի երևոյթ տողերիս գրողը մատնանիշ արաւ տարիներ առաջ «Հովիւ»-ի էջերում հիւնագրութեան (ու-ի փոխարէն ւ) նկատմամբ, որ կարծւում էր նորութիւն և համարւում էր հանգուցեալ Ղ. Աղայեանի գիւտը, այն ինչ դարեր առաջ Մխիթար Այրեւանեցին մի ամբողջ մատենագրութիւն է գրի առել այդ ուղղութեամբ, իր արմատականութեամբ գերազանցելով Աղայեանին էլ, Աղայեանի հետեողներին էլ:

Այժմ նման մի երևոյթ նկատում եմ ոտանաւորի չափի մէջ: Մեր նոր գրականութեան մէջ վերջերս միայն տարածւում է հռաւմանկ հատածների բաժանած չափը, որ ամենից շատ պատահում է Վ. Տէրեանի բանաստեղծութեանց մէջ: Սակայն իրողութիւնն այն է, որ մեր միջնադարեան երգիչներն անծանօթ չեն եղել այս չափին, ինչպէս ցոյց է տալիս հետևեալ տաղը, որ աւելորդ չենք համարում գրի առնել այս առթիւ.

Տաղ: դ^արպի: ի գ^արի: երիցու:

Ի քէն տ^ար հայցեմ հայր գթական.

պարգևայ ինձ իմաստ տեսական.

երգել բանս վ^արն դարիպութ^ե և

որ լինի ի յերկիր հեռաստան:

Ղարիպն | թէ լինի | մեծատուն.

և խելօքն | և մտօքն | իմաստուն.

նայ յիմար | թըւի յաչս | ամենուն.

և կենայ | նայ տրտում | զաւրն ի բուն:

Այլ թէ զղա | բիպն ասեմ | ողբալի.
անճանաչ | յօտար տեղ | հանդիպի.
մի[տ] ածէ | զիւր եղբարք | սիրելի.
սիրտն ողբայ | և աչերն | արտասուի:

Բարմեալ խիստ | խեղճ և ողորմ | նայ կենայ.
զօրն ի բուն | սիրտըն չու | բախանայ.
թէ լինի | որ յանկարծ | քաղցենայ.
երես ի | քարշ երթայ | և մուրայ:

Իսկ թէ լի | նի փակած | դրունք ամէն.
սիրտն ողբայ | և դառնայ | ի դըռնէն.
և կենայ | նայ արտում | զօրն ամէն.
արտասու | քըն թափի | երեսէն:

Պարտաւոր | կարծէ զինքն | ամէնի.
և մեծի | և փոքեր | հնազանդի.
ըզտըխմար | և զանգէտ | ն շահի.
միթէ իւր | բ՛զմ մեղ | քըն քաւի:

Զինչ խարիպ | կայ յերկիր | հեռաւոր.
ամէնու | խելքն ու միտք | է մոլոր.
թէ լինի | խիստ փարթամ | փառաւոր.
դըռնէ դու | ոըն շըրջի | գլուխն ի կոր:

Աւաղ զղա | բիպն ասեմ | եղկելի.
որ յօտար | ի յերկիր | հանդիպի.
ամենքն են | քան¹⁾ զդրախտն | ծառալի.
նայ կըտրած | քան¹⁾ ըզճուղ | մի ծառի:

Քան¹⁾ ըզճուկն | ի ջըրէն | նայ հանած.
ո՛ւ պ հաւ | յերամէն | բաժանած.
ո՛ւ պ ձագ | ի մօրէն | մոլորած.
զի յեղբարց | սիրելեաց | է դատած:

Այլ թէ շա | քար ուտէ | նայ լեղի.
թէ վարդով | զըրուցեն | փուշ թըլի.
և կենամ | զօրն ի մէջ | դուսայի.
և զդիւր կեան | քըն դիժար | համարի:

Բարից դասքն | հրեշտակաց | ա՛մ.
ղարիպին | լինիցին | պահապան.
որ յօտար | ի յաշխարհ | հեռաստան.
մինչ յիւր տե | զըն հասնի | յօթեան:

1) քան=որպէս.

Երգողի՛ | այս տաղի՛ս | դարիպի՛.
 մեղաւոր | և անմիտ | զաքարի՛.
 մենք ամէնքս | ենք դարիպ | յաստենի՛.
 զի յայն կեանքն | է մեզ տո՛ւն | հայրենի՛:
 Տների սկզբնատառերը կազմում են Ի Ղարիպ Զաքարե:

Ինչպէս տեսնում է ընթերցողը մեր ընդօրինակութիւնից, որ կարելի եղածին չափ աշխատել ենք նոյն պահել ձեռագրի հետ, առաջին և վերջին տները շեշտաւոր են, այսինքն հեղինակն ինքը, կամ նրանից ընդօրինակող գրիչը, կարևոր է դատել ցոյց տալ ընթերցողին, որ ոչ միայն այդ տներում, այլ և միւսներում բոլոր հատածների համապատասխան վանկերը շեշտելի են: Շատ հաւանական է, որ հեղինակն ինքը եղանակ դրած և երգած էլ լինի, ինչ որ շատ բնական է մի դարիբ բանաստեղծի համար: Այս ենթադրութեան գլխաւոր հիմքը այն պարագան է, որ ձեռագրում յիշեալ տներում ոչ միայն շեշտը գոյութիւն ունի, այլ և մի քանի, ձայնախազեր և, բացի դրանից, վերնագիրն ևս (սաղ) վկայում է: Շեշտի նկատմամբ բնագրում պահուած է նաև հետևեալ նրբութիւնը. իւրաքանչիւր տողի մէջ, առաջին և վերջին հատածներում, դրուած է ~, մինչդեռ միջին հատածում պարոյկ է, նման պա (°) ձայնախազին: Այս ցոյց է տալիս, որ երգեցողութեան կամ ոգման միջոցին միջին հատածի շեշտը տարբեր է միւսներից. մեզ հաւանական է թւում, որ ~-ը մեր սովորական շեշտի փոխարէն է դրուած, իսկ պարոյկը աւելի ուժեղ և աւելի երկար արտասանելու համար:

Դժբախտաբար իմ ներկայ պայմաններում հնարաւորութիւն չունիմ ստուգելու ոչ հեղինակի անձնաւորութիւնը և ոչ գրուածքի ժամանակը: Եթէ սոյն Զաքարիա երէցը միևնոյն Զաքարիա արեղան է, Տեղեր վանքի միաբան, որ յիշատակւում է Թովմա Մեծոփեցուց (տ. Ալիշան, Այրարատ. էջ՝ 147), ապա և պէտք է ապրած լինի ԺԵ. դարի առաջին կիսում: Իսկ ձեռագիրը, որից քաղում եմ, մի անթուական և անյիշատակարան ժողովածու է զանազան տաղերի ու պատմութեան: Գրուած է ամբողջովին նօտր առերով և գրութեան ժամանակն հազիւ թէ ԺԸ դարից հին լինի:

Գալով սոյն եռավանկ չափի արժէքին՝ անձնական փորձով նկատել եմ, որ սա լաւագոյն չափն է լուրջ, տրագիկ յոյգերի արտայայտութեան համար, մանաւանդ ոգման (декламация) համար: Մեր նոր բանաստեղծները չափի զղջան որդեգրելու այս չափը, եթէ մանաւանդ մէջ ընդ մէջ, աշխոյժի արտայայտութեան համար, տեղ տան նաև քառավանկ հատածների: Այլապէս ամ-

բողջովին զուտ եռամսհանքը կը դառնայ միապաղաղ և տաղտկալի:

Աւելորդ չեմ համարում խոստովանել այստեղ, որ սոյն ոտա-
նաւորի մէջ երկու բառ—Բարմեալ և Բարից—մնում են ինձ ան-
ծանօթ, թէև գործածութիւնից կարելի է գուշակել, որ մին նշա-
նակում է քրմեալ, միւսը՝ ամբողջ, համօրէն: Բար, որի յոգնակի
սեռականը Բարից, ինձ թւում է միևնոյն ժողովրդական բառը
ինչ որ արար (արար աշխարհ), սկզբի ա-ն գեղջուած որոշ
դիտումով:

Մեսրոպ. վրդ. Մախուդեանց

Ք ի ց ւ ե լ .

Ս. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ *)

6.

Իմ նազելի բարեկամ,

Թող այս սուրբ և հանդիսաւոր բոպէիս լռէ, հանդարտէ իմ
վիրաւոր, ցաւերով ու խոցերով լցուած սիրտը. Թող դա այժմ
տեղի տայ մեղմ և խաղաղ զգացողութիւնների, մի քանի խօսք
ասելու Քեզ, արժանաւորիդ, անվրդով հոգով և քաղցր բերանով,
որպէս պատշաճ է այս բոպէիս: Ես չունիմ դիտաւորութիւն նոր
ի նորոյ հաւատացնել Քեզ իմ սէրը և բարեկամութիւնը. դա շատ
հին է և երկար ու ձիգ տարիների փորձով ստուգուած ու հաս-
տատուած: Ոչ, ես կամիմ միայն մի քանի խօսքով խոստովանել
Քեզ այն երանական բախտաւորութիւնը, որ ամենաբարի Նախա-
խնամութիւնը շնորհել է ինձ Քո եղբայրական և բարեկամական
սիրովը: Ասում եմ Քո եղբայրական և բարեկամական սէրը, իմ
ազնիւ Մելքոն, իմ հոգեհարազատ բարեկամ: Այդ սէրը և բարե-
կամութիւնը այսքան երկար տարիների մէջ զարդարել է իմ կեանքը,
պայծառացուցել է իմ պղտոր և մռայլ օրերը, մխիթարել է իմ
շատ անգամ մինչև ի մահ տրտում սիրտը—ինչ ասեմ—իմ վերջին
օրերի անմխիթար փշալից անապատը ծաղկազարդել է ուրախու-
թեան վարդերով: Իմ ազնիւ, միակ Մելքոն, իմ հոգով չափ շնոր-
հակալութիւնը որպէս յայտնեմ Քեզ. դորա համար չունիմ ես
յայտարար խօսքեր, այլ միայն սէր և ամենախորին զգացողու-
թիւն երախտագիտութեան, առ ի սրտէ յարգանք ու մեծարանք
դէպ ի Պատուականդ: Խնդրում եմ, որ և այսուհետև պահես Դու

*) Տես «Արարատ» 1916 թ. Յունուար—Յունիս եւ Նախորդ
համարները: